

Կ. ՊՈՂՈՅ ՀԱՅՆ.**ԵԶԳԵՅԻ ԺՈՂՈՎ.****ՆԻՍ ԺԵ.**

1885 ԹՈՒՆՈՒՐ 24

ՆԻՍ Է Ա Ռ Ա Զ

Կէս օրին մօտ խուռն բազմութիւն մը գրաւած էր Գում - Գարուի Մայր եկեղեցին. որոշեալ ժամուն Տեարք երեսփոխանք արդէն հասած էին և Պատրիարքարան հաւաքեալ. կըրանակցէին միմեանց հետ նոյն աւուր ընտրութեան մասին. Ժամը եօթը քառորդ անցած երեսփոխանք հրաւիրուեցան ի Մայր եկեղեցի, Ա. Խաչի տաճարն. Տաճարն ամբողջապէս յատկացեալ էր ժողովրդեան, իսկ դասը վերապահուած երեսփոխան Տեարք, որք բաւական գժուարութեամբ զետեղուեցան իրենց աթոռներուն վրայ:

ԲԱՅՈՒՄՆ.

Ներկայ երեսփոխանաց թիւն էր 88. — Ատեանը բացուեցաւ ժամը 7/ին ընդ նախագահութեամբ Գեր; Տեղապահ Հօր, և Ատենապետութեամբ Վահեմ. Տիգրան էֆ. Խուսուֆեանի:

Վահեմ. Ատենապետ էֆենտիի հրաւիրանք, Ատենադպիր էֆենտին նախ կարդաց կայսերական Պալատում՝ որ կըրաւերացնէր Գեր. Ռուսական Հօր տեղապահական պաշտօնը, Երեսփոխանք յոտնկայս ունկնդրեցին սոյն պաշտօնագրոյն ընթերցման:

Եթո սոյն ընթերցման՝ Գեր. Տեղ. Ա. Հայրը համառօտ ատենաբանութեամբ մը նախ և առաջ շնորհակալութիւն յայտնեց Վարչ. Խառն ժողովին այն վստահութեան համար՝ որով զի՞նքն պատուեց կոչելով տեղապահութեան պաշտօնին. երկրորդ՝ այդ որոշում Վ. Ե. Կայսեր կողմանէ հաստատուած լինելուն համար շնորհակալութիւն յայտնեց և հրաւիրեց երեսփոխանութիւնը որ Ա. Վ. Հայփառութեան ազգին վրայ տածած հայրական խնամոցն համար աղօմէ Նորա անդին կենացը. և յետոյ յայտնեց թէ՝ ըստ հրամանի Ա. Կ. Վ. Հայփառութեան, հրաւիրած էր Աղդ. Երեսփոխանութիւնն երջանկայիշատակ Ներսէս Պատրիարքի արժանաւոր յաջորդ ընտրելու համար, բայց Ահշմանադրութեան:

Ահաւասիկ Գեր. Տեղ. Հօր ատենախօսութեան պատճէնը.

Խնչպէս տեղեկացած էր, Տեարք Երեսփոխանք, առ 2եղ ուղղեալ հրաւիրագրէն, Երեսփոխանական ժողովցոյ այս աւուր գումարման նպատակն է. Կ. Պոլսոյ Պատրիարքի ընտրութիւնը կատարել, Կայսերական կառավարութիւնն հաստատելով մեր Տեղապահութեան պաշտօնն, զոր ազգային Աեդ-

բռնական Վարչութեան Խառն Ժողովն վստահութիւն ըրաւ նուաստիս յանձնելու Հրամայեց նաև որ Պատրիարքի ընտրութիւնը կատարուի ըստ Սահմանադրութեան Հետեւապէս իմ պաշտօնիս պարտաւորութեանը համաձայն փութացի ընտրութեան նախապատրաստութիւններ կատարել եւ յետ աւարտման սոյն գործողութեանց՝ Հրաւէր ուղղեցի պատուարժան Երեսփոխանացդ գումարուիլ և ընտրել ըստ օրինի Պատրիարքն Երեսփ. Ժողովն որ Ազգը կըներկայացնէ ազգին ամենէն մեծ մէկ իրաւունքն այսինքն իւր Պատրիարքն ընտրելու իրաւունքն գործադրելու Հրաւիրեալ է և Տեարց Երեսփոխանաց իմաստութիւնն և ազգասիրութիւնն տարակոյս չեն թողուր որ Պատրիարքական պարիացեալ ամոռն պիտի ունենայ իւր արժանաւոր յաջորդն և այս մեծ ընտրութիւնն պիտի կատարի ամենայն օրինաւորութեամբ և խաղաղութեամբ Արյուսամք որ այս հանդիսական պարագային առջև ունկնդիր ժողովուրդն ալ պիտի ապացուցանէ իւր օրինասիրութիւնն և Սահմանադրականութիւնն՝ իւր լուութեամբը և պարկեցառութեամբը:

Աւստի պէտք է նախ երախտագիտական ոգւով մեր Օգոստափառ Առութեան Համիտ կայսեր կենաց համար բարեմալթութիւն ընենք՝ որ Նորին Կայսերական ԱԵՀափառութեան հովանաւորութեամբը մեր Եկեղեցին մեր ազգը իւր գոյութիւնը պահած է և պիտի պահէ միշտ խնդրեսցուք զի բարձրեալն Աստուած իւր ամենազօր աջովը Նորին Կոյսերական ԱԵՀափառութիւնը իւր Օսմաննեան գահուն վրայ անփորձ և անսասան պահեսցէ ամէն:

Ատենախոսութեան աւարտմանէն յետոյ Եկեղեցական Երեսփոխանաց Դասն Աւրախ լեր Ս. Եկեղեցի սրտառուչ շարականն երգեց որոյ ունենարեց ժողովուրդն և Երեսփոխանութիւն որք Աեցցէ ԱԵՀ. Առութան Համիտ կայսրն աղաղակելով ձայնակցեցան մաղթանայ:

Սոյն հանդիսաւոր աղօմքէ վերջն Ատենապետ Էֆենտի Հրաւիրեց ՂԱՄԵՆԱԴԱԳԻ Էֆենտի ընթեռնուլ Պատրիարքական Տեղապահ Ա. Հօր Ճեռամբէ առ Իիւանն Ազգ ժողովով ուղղեալ նամակն որով Կրօն ժողովով մի պաշտօնագիրն կըհաղորդէր ծանուցանող մէ Պատրիարքական ընտրութեան առթիւ հարկ եղած նախապատրաստութիւնք աւարտած էին:

Աւասիկ պատճէնը.

Ասեմ. Ատենապետ Էֆենտի ԱԵՀային Երեսփոխանական ժողովը.

Ընտրանօք Ազգ Վարչութեան խառն Ժողովը կոչուելով անարժանարարի պաշտօն Պատր. Տեղապ. և ընդունելով Կոյսերական հաստատութեան Հրամանագիրն որ կըհրամայէ նաև կատարել ըստ Սահմանադրութեան Պատրիարքի ընտրութիւնն փութացի ըստ պարտաւորութեան պաշտամանց ընտրական նախապատրաստութեանց ձեռնարկել ըստ տրամադրութեան Զրդ յօդուածոյ Սահմանադրութեան Հետեւապէս թէ Եկեղեցական Համագումար ժողովով և թէ Քաղաքական ժողովով կողմէ պէտք եղած ընտրելեաց ցուցակներն պատրաստուեցան և Հրաւէր ուղղուեցաւ Ազգ Ժողովով յառաջիկայ ուրբաթ օր Յունվար 25 և ըստ Ազգ Սահմանադրութեան կատարելու համար Պատրիարքական ընտրութիւնն:

Երդ ընդ գրուս կըհաղորդեմ Զեր Ասեմութեան թէ Քարձրագոյն հրամանագիրն և թէ Եկեղեցական Համագ. Ժողովոյ կողմէ պատրաստուած ընտրելեաց ցուցակն ըստ տրամադրութեան Ազգային Սահմանադրութեան.

Մնամք աղօթարար Պատրիարքական Տեղապահ

Գ. Ռ. Ռուսական Տեղապահ.

Ապա Ատենապետ Էֆենտի հրաւիրեց զԱտենապահիր Էֆենտի ընթեռուու Տեղապահ Հօր պաշտօնի հաստատման, ինչպէս նաև նոր պատրիարքի ընտրութիւն ծանուցանող Քաղ. Ժողովոյ ծանօթագիրն:

Աւասիկ պատճենը.

Ասեմ. Ատենապետ Էֆենտի Ազգային Խրեստիոնական Ժողովոյ.

Ազգային ժողովն իւր վերջին արտասովոր նստին մէջ, որ տեղի ունեցաւ ի Մայր Եկեղեցւոջ, Հոգելոյս Տ. Ներսէս Սրբազան Պատրիարք Հօր վախճանման առթիւ, բաղձանք յայտնած էր որ Ազգ. Վարչութիւնն պատրիարքական ընտրութեան համար հարկ եղած նախապատրաստական գործողութեանց ձեռնարկէ ընդ փոյթ. Ազգային ժողովոյ այս բաղձանաց համաձայն, Ազգային Վարչութեան Քաղաքական Ժողովը փութաց անմիջապէս միանալ Կրօնական ժողովոյ հետ. և ընտրեց բացառիկ տնօրինութեամբ ի պաշտօն տեղապահութեան՝ Պատրիարքական Փոխանորդ Գեր. Տ. Գէորգ Ռ. Ա. Ռուսական որոյ ընտրութեան տեղեկագիրը մատուցուելով Բ. Դրան, կայսերական հաստատութեան ինչպէս նաև պատրիարքական նոր ընտրութեան հրամանագիրը շնորհուեցաւ. հետևապէս Քաղ. ժողովն Եկեղ. Համագումար ժողովոյ պատրաստած Պատրիարքական ընտրելեաց ցուցակը զոր Գեր. Տեղապահ Հայր Հաղորդած էր իրեն ուշադրութեան առնելով, փութաց ըստ տրամադրութեան Զդ. յօդուածոյ Ազգ. Սահմանադրութեան հինգ ընտրելի որոշել. ըստ Քաղաքականին՝ անոնց արժանաւորութիւնը ստուգելով, և աշաւասիկ անոնց ցուցակն ընդ գրոյս կը ներկայացնէ Զեր, տնօրինելու համար զոր ինչ արժանն է ըստ օրինաց:

Ի դիմաց Ազգ. Վարչութեան Քաղ. Ժողովոյ

Ատենապահիր

Ատենապետ

Ն. Այլազեան

Ա. Մ. Մաքսուտեան.

Աւասիկ Քաղաքական ժողովոյ Պատրիարքական ընտրելեաց հնգանուն ցուցակը.

Տ. Յարութիւն Արքեպիսկոպոս Վեհապետեան

Տ. Մատթէոս Եպիսկոպոս Եղմիրեան

Տ. Քարթուղիմէոս Արքեպիսկոպոս Ռուրինեան

Տ. Խորէն Արքեպիսկոպոս Նար - Պէյ

Տ. Խորէն Եպիսկոպոս Աշքեան

Այնուհետեւ կարդացուեցաւ Համագումար ժողովոյն հետևեալ պաշտօնագիրն.

Գեր. Տ. Գէորգ Ռ. Վարդապետ Ռուսական Պատրիարքական Փոխանորդ Հայոց Կ. Պոլսոյ.

Յետ վախճանման Պատրիարքին Հայոց Կ. Պօլսոյ՝ Տ. Ներսիսի Սրբազն Եղբագիսկոպոսի Վարժապետեան՝ Եկեղեցական Համագումար ժողովն գումարեցաւ ի 12 ամսեանն նոյեմբերի Ազդ. Պատրիարքարանի, և յետ սգակիր սրտիւ կատարելոյ զմաղթանս հոգեհանգստեան վասն հոգւոյ երջանկայիշատակ հանգուցելոյն՝ ըստ տրամադրութեան երկրորդ յօդուածոյ Ազդային Սահմանադրութեան՝ պատրիարքական նոր ընտրութեան համար ընտրելեաց ցուցակն.

Ի վամբուն և վեց Եկեղեցական Հարց հրաւիրելոց՝ քառասուն և եօթն միայն ներկայ գտնուեցան, և ըստ օրինի կատարուելով քուէարկութեան և քուէհամարի գործողութիւնն՝ պատրաստուեցաւ պատրիարքական ընտրելեաց ցուցակն.

Եկեղեցական Համագումար ժողովը զնոյն փակեալ ցուցակ պատրիարքական ընտրելեաց՝ կըհաղորդէ Գերապատուութեան Զերում ի պարտուպատշաճ տնօրէնութիւն:

Ի դիմաց Եկեղ. Համագումար ժողովը՝

Ատենադպիր

Ատենապետ

Յովհաննէս Վարդ. Արշարունի.

Գրիգոր Խպիսկոպոս Ալիամձեան.

12 նոյեմբերի 1884:

Եետոյ Ատենապետ էֆէնտի հրաւիրեց երեսփոխանութեան ուշադրութիւնն Ատենապետաց Դիւանի տեղեկագրին վրայ՝ զոր ընթերցաւ նոյնպէս Ատենապիր էֆէնտին:

Աւասիկ պատճէնը.

Ատենապետաց Դիւանս, պատրիարքական ընտրութեան առթիւ ի խորհրդակցութիւն գումարելով, ըստ ներքին կանոնագրի, նկատողութեան առաջ պեղչելի ցանկը զոր Վարչութիւնը ներկայած էր Սահմանադրութեան պահանջած կրօնական ու քաղաքական պայմանաց ապահովութեան ծանօթագրով մը. և, այս ցանկին վրայ ունէ դիտողութիւն չունենալով, միաձայն որոշմամբ պատշաճ դատեց նոյնութեամբ ենթարկել զայն Ազգային ժողովը գումարելով առաջարկութեան առաջարկութեան առաջարկութեան:

Տիգրան Եռւուովեան

Մատթէոս Խպիսկոպոս Էզմիրլեան

Կ. Ա. Խւթիւնեան

Ք. Վաղարսոսեան

Կ. Սըմաձեան

Յ. Ա. Թորոսեան

Մինաս Զերազ

Գ. Նորատունկեան (տեղեկաբեր)

24 Յունվար 1884. Կալաթա:

Ատենապետաց Դիւանի տեղեկագրոյն ընթերցումէն յետոյ, Պէրպէրեան էֆէնտի դիտել տուաւ թէ՝ վարչութեան տեղեկագրին պէտք էր ծանօթագիր մը կցել, ըստ տրամադրութեան ներքին կանոնագրոյն, ընտրելեաց իւրաքանչիւրին անցեալն ու արժանիքն ծանուցանող, հետեւարար թերի կըդըտնէր ներկայացեալ տեղեկադիրն:

Ատենապետ էֆէնտին հրաւիրեց Ատենապետաց դիւանի Տեղեկաբեր էֆէնտին առ այս հարկ եղած բացատրութիւններն տալ:

Հետեւարար նորատունինան Գ. Էֆենտի (տեղեկաբեր) պատասխանեց թէ՝ այդ կէտն վրիպած չէր Ատենապետաց դիւանի ուշադրութենէն. բայց նկատելով որ Քաղ. ժողովը, չուզելով որ ծանօթագիրն ձնշում կամ աղդեցութիւն բանեցնէ երեսփոխանաց տալու քուէին վրայ, պատշաճ դատած էր եկեղեցական Համագումար ժողովոյ քուէարկած ցանկին մէջ առաւելագոյն քուէ ստացող հինգ եպիսկոպոսաց անուանքն՝ ըստ կարգի իւրեանց քուէին՝ իրրե ընտրելի ներկայել Ազգ. Ժողովոյ, Նկատելով նաև որ այդ տրամադրութիւնն Քաղ. ժողովոյ մէկ իրաւունքն էր, որ ազատ էր ի գործ դնել կամ ոչ, և պարտաւորիչ չէր իրեն համար. Ատենապետաց դիւանն ալ յետիորհրդածութեան՝ խիստ բանաւոր և պարագայից յարմար գտած էր Քաղաքական ժողովոյ սոյն տեսակէտն, և պատշաճ դատած էր նոյնութեամբ ընդունել նոյն ցանկն զոր անփոփոխ կենթարկէր Երեսփոխանաց քուէին, և թէ այսպիսի ծանօթագիր մը Քաղ. Ժողովոյ տեղեկագրին կցած չըլլալ բնաւ օրինական պակասութիւն մը չէր կրնար նկատուիլ.

Սուրբեան Էֆենտի օրինական դիւտողութեան մը համար խօսք առնելով անբաւական համարեց Ատենապետաց դիւանի տեղեկաբեր Էֆենտիի բացատրութիւնքն և եղբակացուց թէ՝ ներքին կանոնագրի և Սահմանադրութեան մէջ այս մասին անհամաձայնութիւն մը կայ և պէտք է ժողովոյն որոշել թէ Պատրիարքական ընտրութեան առմիւ որո՞ւ պէտք է հետեւիլ, և եղբակացուց թէ՝ ըստ որում ներքին կանոնագրին Սահմանադրութեան վերջ վաւերացեալ է ժողովէն, ուստի ո՞չ Քաղ. ժողովն և ո՞չ Ատենապետաց դիւանն իրաւունք ունէին կանոնագրին մէկ կողմ ձգել. հետեւապէս պարտաւոր էին նորա տառական տրամադրութեանցը համաձայն վարուիլ, որով ընտրելոց անցելոյն և արժանեաց վրայ Քաղ. ժողովոյ կողմանէ ծանօթագիր մը չըլլառնուիլն օրինական թերութիւն մը կրնկատէր, հետեւապէս Ատենապետաց դիւանի առաջարկն մերժել կառաջարկէր.

Վաերմ. Նուրեան Էֆենտի խօսք առնելով ըստ թէ՝ ի՞նչ է Սահմանագրութիւն և ի՞նչ է ներքին կանոնագրութիւն. պէտք է զանազանել, Սահմանադրութիւնն ազգին օրէնքն է, իւր կողմէն խմբագրեալ և կայսերական բարձր հրամանաւ. վաւերացեալ, որոյ տրամադրութեանց համաձայն վարուիլ ամեն պարագայի մէջ ազգին պարտականութիւնն է, իսկ կանոնագրութիւնն ժողովոյ ընթացից կանոնաւորութիւնն ապահովող եղանակն է, ինչպէս որ անունն իսկ կըցուցնէ. և ամեն պարագայի մէջ երբ որ և իցէ հակասութիւնն մը տեսնուէր, ժողովն ուրիշ կերպ չէր կրնար ընել եթէ ոչ Սահմանադրութեան հետեւիլ. « Իսկ ներկայ պարագայիս մէջ հակասութիւնն իսկ չեմ նըշմարեր, ինչպէս որ Ատենապետաց Դիւանի տեղեկաբեր Էֆենտին պարզեց. Օրէնսդրին դիտաւորութիւնն երբէք ընտրելեաց արժանիքն ճշդիւ կըսոլ ծանօթագիր մը պահանջել չէր կրնար ըլլալ, վասն զի այդպիսի կշիռ մը գեռ ևս գտնուած չէ ամրող աշխարհի մէջ, և իւրաքանչյուր ընտրող միմիայն իւր խղճին մէջ կրնայ գտնել զայն. Օրէնսդրի դիտաւորութիւնն այն է թէ՝ երբ դիպուածով պյանդիսի եպիսկոպոսի մը անուն սպրդի ընտրելեաց ցանկին մէջ.

որն որ արժանի չլինի ընտրելի պաշտօնին. այդ պարագայի մէջ Ատենապետաց դիւնքն իրաւունք ունենայ դիտողութիւն ընելու և ի հարկին ցանկէն դելու նորա անունն. Արդ՝ Քաղաքական ժողովը Համագումար ժողովոյ պատրաստած այդ ցանկին մէջէն հինգ Խպիսկոպոսաց անուններն Ազգ. Ժողովոյ ներկայացնելով ուրիշ բան մը չէր ըներ, եթէ ոչ բացարձակապէս կրսէր թէ անոնց մէջէն ո՛րն որ ընտրուի, իւր կողմանէ ամեննեին դիտողութիւն չկայ և հաւասարապէս արժանաւոր կրտատէր Պատրիարքական պաշտօնին. Անկից անդին յառաջ երթալ ոչ բանաւոր էր և ոչ ալ պատշաճ, ուստի կրմերթէր այս մասին եղած դիտողութիւնները և կառաջարկէր ընդունիլ Ատենապետաց դիւնի տեղեկադիրն. :

Առ այս պատասխանել ուզեցին Պէրպէրեան, Սուրէնեան և Գուրգէն Էֆէնտիք, սակայն բազմաթիւ երեսփոխանք քուէ պահանջելով, Ատենապետ էֆէնտին յիշեցուց թէ՝ ըստ որում բազմաթիւ երեսփոխանք քուէ կրխնդրեն, չէր կրնար խօսք տալ և ոչ մի երեսփոխանի, քանզի Ատենապետաց դիւնի տեղեկագիրն ձեռամբարձով առանց վէճի կամ պէտք էր ընդունիլ կամ մերժել, ըստ ներքին կանոնագրի 47րդ յօդուածոյ, Սոյն պահուն Սուրէնեան էֆէնտի պնդեց թէ՝ Ատենապետն իրաւունք չունէր քուէի դնելու ինդիրն և պէտք էր խօսք տալ իրեն իւր կարծիքն պաշտպանելու համար, հետեւապէս կըրսողոքէր այս քուէարկութեան դէմ:

Ատենապետ էֆէնտին ըստ թէ՝ ինքն օրինաց համաձայն պարտաւոր էր շարժիլ և Սուրէնեան էֆէնտի պահանջումը բոլորովին անտեղի էր. խօսք պիտի տար իրեն, եթէ ժողովը մերժելու ըլլար Ատենապետաց դիւնի եղանակացութիւնն, որոյ քուէի դրուիլն կըպահանջէին բազմաթիւ նստարաններէ:

Սուրէնեան էֆէնտի վերստին բոլորելով մեկնեցաւ ժողովատեղիէն:

Եթե որոյ Ատենապետն քուէի դրաւ Ատենապետաց դիւնի տեղեկագրոցն եղրակացութիւնն, որ 6ի դէմ միաձայնութեամբ ընդունուեցաւ ժողովէն:

Նետեարար քուէթուղթերը ցրուեցան երեսփոխանաց, և Ատենապետ էֆէնտի հետեւեալ վեց երեսփոխանները վիճակու քուէարկութեան քննիչ կարգեց.

1. Կարապետ Վարդ. Բագրատունի
2. Վահան Վարդ. Տէր Մինասեան
3. Գրիգոր Քահանայ Աճէմեան
4. Մ. Ալեքսանեան էֆէնտի
5. Յ. Ելմէնիմեան
6. Ն. Գարագաշեան

Սոյն պահուն Պէրպէրեան էֆէնտի դիտել առւաւ թէ՝ երեսփոխանք արդեօք մի միայն Քաղաքական ժողովոյ կողմանէ ներկայացեալ հինգ ընտրելեաց ցանկին վրայ քուէ պիտի տան, թէ ոչ անկից դուրս Համագումար ժողովոյ ներկայացուցած ամբողջ ցանկին մէջ գտնուած ու և իցէ Խպիսկոպոսի մը ևս քուէ կրնան տալ. Խոկ Գուրգէն էֆ. երկրորդելով Պէրպէրեան էֆ. ի սոյն դիտողութիւնն. յարեց թէ ըստ որում Քաղ. ժողովը պատշաճ դատած էր

Համագումար Ժողովոյ ցանկին մէջ առսւելագոյն քուէ ստացալներէն հինգ եպիսկոպոսաց անուանքն՝ ըստ կարդի իւրեանց քուէի՝ իրբեւ Պատրիարքական ընտրելի ներկայացնել, ի՞նչ պատճառ կար Գեր. Մելքիսեդէկ եպիսկոպոսն այն ցանկէն դուրս ձգել և անկէ անմիջապէս ետք եկող եպիսկոպոսին անունն նշանակել:

Առ այս Քաղ. Ժողովոյ Ատենապետ Սիմոն պէ. Մաքսուտ պատասխանեց թէ՝ Քաղ. Ժողովն ինչ ինչ նկատումներով, զորս իրեն կըմիրապահէր, հարկ դատած էր Գեր. Մելքիսեդէկ եպիսկոպոսի անունը ցանկէն դուրս թողուլ:

Պէրպէրեան և Գուրգէն էֆէնտիք դարձեալ հարցուցին թէ՝ այն պարագայի մէջ ի՞նչ պիտի ըլլայ քուէից հետեանքն եթէ երեսփոխանք նորակամ այդ հնգանուն ցանկէն դուրս գտնուած եպիսկոպոսներէն միոյն վրայ քուէարկէին. Առ այս Ատենապետ էֆ. պատասխանեց թէ՝ քիչ մը առաջ Ատենապետաց դիւանի տեղեկարեր էֆ. ի և Վասեմ Նուրեան էֆէնտիի տուած բացատրութիւններէն բացայայտապէս յայտնուեցաւ որ թէ Քաղ. Ժողովոյ և թէ Ատենապետաց դիւանի կարծիքն էր ընտրութիւնը Սահմանադրութեան տրամադրութեանց համաձայն կատարել. հետեապէս ամեն երեսփոխան ազատ է Համագումար Ժողովոյ կողմանէ քուէարկեալ ցանկին մէջ գտնուող ուկիցէ եպիսկոպոսի տալ իւր քուէն:

Ժողովը միահայնութեամբ համակիրպեցաւ Ատենապետ էֆէնտիի սոյն յայտարարութեան և անմիջապէս ձեռնարկեց քուէարկութեան. որ կատարուելով հետեեալ արդիւնքն ունեցաւ:

թէ - քուէարկութեաց 87

քուէ

Տ. Յարութիւն Արքեպիսկոպոս Վեհապետեան.	65
Տ. Խորէն . Նար. Պէ. 12	
Տ. Մելքիսեդէկ . Մուրատեան . 4	
Տ. Մըտիշ . Խրիմեան . 2	
Տ. Քաղուղիմ . Ուուրինեան . 2	
Տ. Խորէն Եպիսկոպոս Միիթարեան . 1	
Եպիտակ քուէ 1	
	87

Քուէարկութեան արդիւնքն քննչաց կոչմանէ ստորագրեալ Մայր Դիւանի աւանդուեցաւ և Ատենապետ էֆէնտի ղայն Ժողովին հաղորդելով Կ. Պօլսոյ Պատրիարքական Աթոռին Գահակալ հոչակեց Պարիսին Սրբազնութիւն Տ. Տ. Յարութիւն Արքեպիսկոպոս Վեհապետեան:

Սոյն ընտրութիւնն Երեսփոխանաց կողմէ բռւռն ժամանակակիր ողջունուեցաւ. որոյ պատասխան տուաւ համայն ժողովուրդն երից ժամանակութեամբ կեցցէ Յարութիւն Սրբազնան. աղաղակելով.

Սոյն պահուն Մերեէմ. Գուլի Յարութիւն էֆէնտի խոռոք առնլով ըստ:

Մէծ գոհութեամբ կը համակուին մեր սրտեր տեսնելով այն գովելի ընթացքն. որով Ազգ. Երեսփոխանք ստուար մէծամասնութեամբ քուէից

կընտրեն միաբան Թուքքիոյ Հայոց Պատրիարքն, և չեն երկարաձգեր Կ. Պօլսոյ աթոռոյն թափուր վիճակն: Այս իմաստուն գործողութեան մէջ երկու նշանաւոր պարագայք կընչմարուին: Մին այն է՝ որ նորո՞նտիր Պատրիարքն ոչ միայն Ազգ Երեսփոխանաց ընտրեալն է, այլ նաև Ազգ: Եկեղեցականաց: Մեր Եկեղեցական Ս. Հարք գիտեն թէ ազգային կոռւանին վրայ մեզ աշխարհականաց հետ միաբան գործակցութեամբ միայն կարելի է պահել պահանել Ազգին շահերն և իրաւունքն: Բնչպէս որ այս անդամ ևս մի շաշափելի փորձը տուին սցյն սկզբան, առ աջնակարգ ընտրելի նշանակելով այն անձն՝ որ ժամանակին պահանջած Պատրիարքացուն էր նաև Ազգ: Երեսփոխանութեան համար:

(Բարեկամութեան պատճեն: — Ակադեմիա և պատմական Ս. Հայութ):

Այս՝ կեցելով Հայ Եկեղեցականը, որ ժողովրդէն անբաժան կը մնան և անոր շահերէն տարբեր շահու չեն ծառայեր:

Միւս պարագայն ալ այն է՝ որ ընտրեալ Պատրիարքն Ազգին համօրէն և ճշմարտիւ ազատ կամօքն կը կոչուի ի պաշտօն: զի այդ պատկառելի անձնաւորութիւն, Բնչպէս ամեն ոք գիտէ: ոչ հետամուտ հանդիսացաւ ինքն Պատրիարքութեան, և ոչ ալ ո և է ապօրինաւոր միջոց փորձեց ընտրողաց քուէներուն վրայ ձնշում կամ ազգեցութիւն բանեցնելու նպատակաւ:

Հետեւ արար այս կրիսնակի առաւելութիւնը իրաւունք կուտան մեզ բատ ամենայնի բարեգուշակ նկատել այս ընտրութիւնն, և յուսալից լինիլ նորա արդիւնաւորութեան վրայ:

Յետ որոյ Ատենապետ Էֆենտին սոյն նստի օրինաւորութեան մասին համայն երեսփոխանաց ցցյց տուած նախանձախնդրութեան համար մասնաւոր շնորհակալութիւն յայտնեց, և հրաւիրեց զԵրեսփոխանս որ ինչպէս ատեանը բացուած պահուն նոյնպէս և փակուած պահուն յայտնեն իրենց երախտագիտութիւնն առ ԱԵՀ. Սուլթան Համիտ Բ. Կայսրն, որ Խւր բարձր հովանաւորութեան ներքե միշտ հայրարար կը խնամէ իւր հաւատարիմ հպատակ հայ ժողովուրդն:

Աւստի Երեսփոխանը և ժողովուրդն միաձայնութեամբ « Ակցցէ Սուլթան Համիտ Խան » աղաղակերով ատեանը փակեցաւ, ի ժամ 9/:

Յետ ընտրութեան երր Երեսփոխանը Պատրիարքարանի գահին ելան ընտրութեան Բ. Դրան մատուցանելու հայութեան կամ տեղեկագիրն ստորագրելու: Ներկայացան Գեր. Տեղապահ Հօր, զոր շնորհաւորեցին ընտրական գործողութեան բարեկարգ կատարման համար: Գեր. Տեղապահն ալ շնորհաւորեց զԵրեսփոխանութիւնն: իւր այս կարեւոր պաշտօնն այսչափ շուտով և դիւրաւ ի գլուխ հանելուն համար:

Ապա բազմաթիւ Երեսփոխանը, առ աջնորդութեամբ Ազգ. Ժողովոյ Ատենապետին Երուսաղէմատուն զնացին և ներկայացան Երուսաղէմայ Սրբազն Պատրիարքին: Ատենապետ Էֆենտին բացատրեց թէ, Ազգ. Ժողովը, Կ. Պօլսոյ Պատրիարք ընտրելով Երուսաղէմի միաբան մը, ցցյց տուած էր թէ, որչափ սերտ կապերով կապակցեալ կընկատէ այս երկու Աթոռները: Ամեն. Եսայի Պատրիարքը շնորհակալութիւն յայտնեց այս զգացմանց մասին: և շնորհաւորեց Երեսփոխանութիւնն իւր կատարած ընտրութեան համար:

« Արեւելք » (թ. 321. 26 Յունվար 1885):

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.

Էմայս 19 ին Մայր Աթոռու ժամանեցին Վարարաղի Արքեպիսկոպոս Գեր. Տէր Գրիգոր Սաղինեան: Շամախուց եպիսկոպոս Գեր. Տէր Թագէու Զիւնական: Կարսի Եպիսկոպոս Գեր. Տէր Գրիգորիս Աղուանեան և փոխանորդ թեմակալին Երևանայ Գեր. Տէր Գէորգ Եպիսկոպոս: որ ամսյս 21-ին վերադարձաւ Երևան, իսկ միւսները պէտք է մեան մինչև կաթողիկոսի ընտրութիւնը: